

ԹՈՒՐՔԻԱՅԻՆ ՍԱՆՁԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ*

Միացյալ Նահանգների Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի 2019 թ. հոկտեմբերի 29-ի և Սենատի 2019 թ. դեկտեմբերի 12-ի միահամուռ քվեարկությունները ոգևորությանը միախառնված շփոթմունքի տրամադրություններ են ստեղծել հայ հասարակության ներսում:

Ինքնաբերաբար հայտնվելով համաշխարհային քաղաքականության ասպարեզ վերադարձող **Հայկական հարցի** շքեղ տեսլականի առջև՝ մենք անմիջապես արձանագրում ենք այն իր «դասական տեսքով» առաջադրելու հնարավորության բացակայությունը: Բայց քանի որ մերձավոր-միջինարևելյան ընդարձակվող տարածաշրջանի «կափարիչին» հայտնված մեր երկրի համար Հայկական հարցի վերաբացումը ոչ թե հնարավորություն է, այլ **ճակատագիր**, այսօրվանից պարտավոր ենք մտածել անհնարին թվացողը հնարավոր դարձնելու հանգրվանների մասին:

Մեր տարածաշրջանում Առաջին աշխարհամարտից հետո ձևավորված աշխարհաքաղաքական իրողությունների փլուզումները **օբյեկտիվ հիմք** ունեցող գործընթացներ են, որոնք Հայաստանին ու հայությանն անպայման ներառելու են իրենց շրջապատույտի մեջ՝ անկախ նրանից՝ ցանկանում ենք դառնալ «մեծ խաղի» մասնակիցը, թե՞ ոչ: Որովհետև ամերիկյան ներկա վարչակազմին բնորոշ իզոլյացիոնիզմի պայմաններում անգամ ողջ «կոլեկտիվ Արևմուտքը» սկսել է մերձավոր-միջինարևելյան «նոր Վերսալի» նախապատրաստությունները՝ դանդաղորեն խաղի մեջ ներքաշելով նաև Ռուսաստանին, որը, հետխորհրդային տարածքում լինելով «մեծ խաղի» օբյեկտը, Մերձավոր-Միջին Արևելքում նրա սուբյեկտը դառնալու ուղիներ է փնտրում: Բայց մեզ համար ամենակարևորն այն է, որ տարածաշրջանի շուրջը ծավալվող «մեծ խաղի» թիրախում է հայտնվել իր նախկին աշխարհաքաղաքական գործառույթը կորցրած Թուրքիան: Վերջինիս ագրեսիվության կտրուկ աճը իրականում ոչ թե հեռահար-ռազմավարական հաշվարկի արդյունք է, այլ աշխարհի հզորների կողմից թելադրվող խաղի նոր կանոնների մեջ չտեղավորվելու հետևանք: **Թուրքիան չունի ապագայի այնպիսի տեսլական, որը կարող է համահունչ լինել տարածաշրջանում ծավալվող քաղաքակրթական գործընթացների խորքային ուղղվածությանը:** Նրա նոր օսմանյան հա-

Վե՛ր համահայկական հանդես, ԺԱ (ժԷ) 4 (68), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2019

* Ընդունվել է տպագրության 10.12.2019:

վակնությունները սպառնալիք են հունական (Հունաստան, Կիպրոս) ու արաբական աշխարհների (Սիրիա, Իրաք, Լիբանան), և անգամ Իսրայելի համար, իսկ ահա նոր թուրանական ձգտումները՝ ոչ միայն Հայաստանի, Վրաստանի ու Իրանի, այլև «մեծ խաղի» գրեթե բոլոր մասնակիցների համար: Ուստի ժամացույցի սլաքի պտույտներին հակառակ ուղղությամբ՝ Բալկաններից ու հունական աշխարհից մինչև Արևելյան Միջերկրածովք ու արաբական աշխարհ, Իսրայելից մինչև Իրանի սահմաններ, Հարավային Կովկասից մինչև Ղրիմ ու մերձսևծովյան գոտի, Թուրքիան սկսել է դուրս մղվել երկբևեռ աշխարհակարգի փլուզմանը հաջորդած քաղաքակրթական խոշոր հանրույթների ձևավորման գործընթացից:

ԻՍՀՄ-ի փլուզումից հետո մի պահ թվում էր, թե, ունենալով դեպի Եվրասիայի խորքերը ձգվող իր թուրանական հետագիծը, Թուրքիան գոնե այս ծիրում կարող է ծավալվել ու միաժամանակ՝ որոշակի «ծառայություններ» առաջարկել «կոլեկտիվ Արևմուտքին»: Բայց երբ «սուլթան Էրդողանը» ընդհարվեց Ֆ. Գյուլենի հետ և սկսեց արմատախիլ անել նրա գլխավորած շարժումը, նման հնարավորությունը ևս ի չիք դարձավ: Իսկ Թուրանի նորացման տեսլականին փոխարինած պարզունակ ծավալապաշտությունն անխուսափելի է դարձրել Թուրքիայի շահերի բախումը ոչ միայն իր պետական ու էթնիկ սահմանագծերը հսկող երկրների՝ Իրանի ու Չինաստանի, այլև Եվրասիական միության միջոցով ժամանակավորապես «Նոր Ոսկե Հորդայի» գործառույթը ստանձնած Ռուսաստանի հետ, որն իր վերահսկողության տիրույթում «նոր սելջուկների» կարիքը չի զգում:

Եվ սա ոչ թե թրքամետության բոլշևիկյան համախտանիշից այդպես էլ չազատված Ռուսաստանի ղեկավարությանը պարբերաբար հասցվող «թիկունքից հարվածների» հետևանքն է, այլ մեկ կաթսայում «երկու շան գլուխ» եփելու անհնարինության լուսարձակումը: Իսկ ահա Թուրքիային սիրաշահելու Ռուսաստանի փորձերը շարունակում են մնալ ՆԱՏՕ-ի հարավային թևի թուլացման՝ սառըպատերազմյան հնացած պատկերացումների շրջագծում, որովհետև Եվրասիական տարածքում նրանք ամենասանհաշտ մրցակիցներն են:

Ուրեմն՝ Թուրքիայի քաղաքակրթական շրջափակումն աշխարհաքաղաքականի վերածվելու ճանապարհին առկա իրական խոչընդոտը ոչ թե Ռուսաստանի հետ նրա «հրթիռային ֆլիրտն» է, այլ ՆԱՏՕ-ի միջոցով դեռևս մի կերպ պահպանվող ընդհանուր տնտեսաքաղաքական համակարգը: Որովհետև ռուսական հրթիռները կարող են փակել Թուրքիայի երկինքը՝ ապահովելով «սուլթան Էրդողանի» անձնական անվտանգությունը, բայց չեն կարող շրջափակել այդ երկրի ֆինանսատնտեսական համակարգի փլուզման ուղին: Ռ. Էրդողանի գերնյարդային արձագանքը ՆԱՏՕ-ի «ուղեղի մահվան» մասին Ֆրանսիայի նախագահի եզրահանգմանը վկայում է, որ Թուրքիայի ղեկավարությունն այս մար-

տահրավերի պատասխանը չունի: Որովհետև երբ բրիտանական «Բրեքսիթ» նախօրեին իր քաղաքակրթական դիմագիծը հստակեցնող մայրցամաքային եվրոպան նայում է դեպի Արևելք, նրա տեսադաշտում հայտնվում է ոչ թե իսլամական Թուրքիան, այլ քրիստոնյա Ռուսաստանը: Իսկ Արևելքից՝ Չինաստանի, հարավից՝ թյուրքական աշխարհի ներթափանցումների թիրախում հայտնված Ռուսաստանի համար ռազմավարական առումով եվրոպական հեռանկարը գերադասելի է Լենին-Աթաթուրք դաշինքի վերականգնման գայթակղությունից:

Նման պայմաններում ոչ միայն եվրոպական «նոր խաչակիրների» շրջանում, այլև «Հին Իսրայելի» անվտանգությամբ մտահոգ ուղեղային կենտրոններում առաջ է եկել «սառը պատերազմի» ընթացքում պարարտացած Թուրքիային իր ազդեցության իրական սահմաններին վերադարձնելու տեսլականը, ինչից վաղ թե ուշ ծնվելու է «Նոր Իսրայել» ունենալու պահանջումը: «Հին Իսրայելը» արդեն կատարել է արաբական ազգայնականությանը զսպելու իր գործառույթը՝ զուգահեռաբար նախապատրաստելով քրդական ինթիֆադայի հասունացումը: Մինչդեռ սուննի իսլամների խալիֆի ու թուրանական խաքանի արխաիկ գործառույթների միաձուլման մասին երազող Թուրքիայի ղեկավարությանը զսպելու առաջադրանքը պահանջում է պատերազմելու և հաղթելու ունակ հզոր բանակներ: Եվ այստեղ հերթական անգամ արձանագրվում է մայրցամաքային աշխարհաքաղաքականության հայտնի պարադոքսը. ինչպես Սիրիայի, այնպես էլ Հարավային Կովկասի վրա աչք տնկող Թուրքիայի ճանապարհները փակվում են հենց իր «բարեկամ» Ռուսաստանի կողմից: ԱՄՆ-ի Կոնգրեսի 2019 թ. հոկտեմբերի 29-ի միահամուռ քվեարկությունից հետո Հայաստան ժամանող ու Ծիծեռնակաբերդի բարձունքին խոնարհվող Ռուսաստանի արտգործնախարարը 2019 թ. դեկտեմբերի 12-ին ԱՄՆ-ի Սենատում տեղի ունեցած միաձայն քվեարկությունից առաջ հայտնվում է Դ. Թրամփի կաբինետում: Որովհետև «գեոպոլիտիկա» կոչվող գիտության հստակ օրինաչափություններին արդեն գումարվում են նաև Հայաստանում կողմերի ունեցած **ընդհանուր շահերը**:

2018 թ. գարնան հեղափոխության ու մանավանդ՝ ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման հետևանքով Հայաստանի Հանրապետությունը աշխարհաքաղաքական նոր կարգավիճակ է ձեռք բերել: Թեև մենք «դե-յուրե» դեռևս Հարավային Կովկասի մասն ենք, բայց «դե-ֆակտո» արդեն ներառվել ենք Մերձավոր-Միջին Արևելքում ձևավորվող նոր հակակշիռների համակարգում: Իսկ ահա այդպես էլ Հարավային Կովկասում մնացած թուրքական Ադրբեջանը հայտնվել է «վտանգավոր անտերության» մեջ՝ դառնալով Թուրքիային սանձելու խնդրի լուծման հնարավոր թիրախներից մեկը:

Վե՛ր համահայկական հանդես, ԺԱ (ժԷ) տարի, թիվ 4 (68), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2019

ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը ոչ միայն Թուրքիային զսպելու հերթական քայլն է, այլև 1923 թ. հոկտեմբերի 29-ին ստեղծված Թուրքիայի Հանրապետության **դեֆեզիտիմացման** գործընթացի սկիզբը: Մինչդեռ տարածաշրջանում ծավալվող աշխարհաքաղաքական տեղաշարժերի առանցքում Առաջին աշխարհամարտի արդյունքների վերանայման հիմնախնդիրն է: Ուրեմն՝ ներկայումս ողջ խնդիրն այն է, թե ո՞ր կողմից է քանդվելու այդ պատերազմի ավարտին մեր տարածաշրջանում հյուսված «թուրքական կծիկը»՝ **սկզբի՞ց, թե՞ վերջից:**

Մոտր 100 տարի առաջ՝ 1918 թվականին՝ Հայոց ցեղասպանության իրականացման միջոցով Արևմտյան Հայաստանի հայությանը բնաջնջելուց հետո, Մեծ Թուրանի երազանքով տարված Թուրքիան ներխուժել է Հարավային Կովկաս՝ սրտեծելով «Ադրբեջան» կոչվող թուրքական պետությունը և փորձելով նրան կցել նաև հայկական Արցախը: Ուստի Առաջին աշխարհամարտի արդյունքների վերանայման միջոցով Թուրքիային սանձելու խնդրի լուծումը ենթադրում է «Ադրբեջան» կոչվող թուրքական պետության խաղաղ կամ բռնի կազմաքանդումը՝ նրանից հայկական երկրամասերը տարանջատելու և Արևելյան Այսրկովկասի թուրքացման ենթարկված ժողովուրդներին ազատագրելու միջոցով:

Այս առաջադրանքի իրականացման նախանական հանգրվանում Թուրքիային սանձելու խնդրի լուծումը մեր օրերի հրամայականն է դարձել: Ուստի ոչ միայն ճանաչվում է Հայոց ցեղասպանությունը, այլև «տարօրինակ» տեղեկատվական արտահոսքի միջոցով ասպարեզ է նետվում Հայաստանի վրա կախված թուրքական վտանգի գաղափարը: Քանզի շվեդա-գյուլենական «Nordic Monitor»-ի կողմից Հայաստանի դեմ ուղղված Թուրքիայի օդուժի «գաղտնի» ծրագրերի վերջին լուսարձակումն իրականում ոչ թե մեզ սպառնալու, այլ Ռ. Էրդողանի գլխին «գործ սարքելու» համար էր:

Հաջորդ քայլը պետք է ձեռնարկի Ռուսաստանը, որովհետև Բրատիսլավայում կայացած ԵԱՀԿ նախարարական վերջին խորհրդաժողովում լավրովյան «բազմաչարչար պլանի» հերթական ձախողումը ոչ թե Ադրբեջանի, այլ Թուրքիայի ապտակն էր Ռուսաստանին: Ադրբեջանը թուրքական պետություն է, որը, շարժվելով Հայաստանի Հանրապետության վերացման Քեմալ Աթաթուրքի ծրագրով¹, զոմբիացվել և իր հակահայկականության պատանդն է դարձել: Բայց քանի որ Հայոց ցեղասպանության ամերիկյան ճանաչումով Հայաստանը «Թուրքիայի մասով» ստացել է անվտանգության հստակ երաշխիքներ, ապա «պատերազմի փաստարկն» աստիճանաբար ձեռքից բաց թողնող նրա հակառակորդները շու-

¹ Ավելի մանրամասն տե՛ս «ՎԷՄ»-ի ներկա համարում հրապարակվող՝ **Ռուբեն Ա. Սաֆրաստյանի** աշխատության մեր գրախոսության մեջ:

տով հայտնվելու են անելանելի դրության մեջ: Դրան գումարվելու է նաև փոխբացատրող աշխարհաքաղաքական ազդակների բախումը Ադրբեջանի ներսում՝ այդ արհեստաձին պետության գոյության հիմքը կազմող 1921 թ. մարտի 16-ի պայմանագրի 100-ամյակի նախօրեին. Արևմուտքի համար Ադրբեջանը սոսկ հակաիրանական պլացդարմ է, Ռուսաստանի համար՝ տարածաշրջան վերադառնալու ցատկահարթակ, Թուրքիայի համար՝ իր շարունակությունն Արևելքում: Իսկ դա նշանակում է, որ Հայոց ցեղասպանության ճանաչումով Թուրքիայի առջև կրկին փակվող Հարավային Կովկասում Ադրբեջանն այն «թոյլ օղակն» է, որի շուրջն է ծավալվելու Առաջին աշխարհամարտի արդյունքների վերանայման գործընթացը:

Անշուշտ, 2020 թվականին մեր առջևող բացվող այս պատմական հնարավորությունը չեզոքացնելու համար Թուրքիան կարող է Ռուսաստանի գիրկը նետել «կանացի կերպարանք» ստացող Ադրբեջանին՝ փոխարենն ակնկալելով Նախիջևանի հետ նրա «շահավետ փոխանակությունը»: Բայց այսօր 1920 թվականը չէ և **ալիևյան** Ադրբեջանի **փաշանացումը** չի կարող քողարկել նրա քաղաքակրթական դիմագծի բացակայությունը:

Ադրբեջանի կազմաքանդման գործընթացը սկսվելով Ղարաբաղի լեռներից իջնելու է Քուռ և ապա՝ Արաքս գետերի հովիտները, որպեսզի Նախիջևանի վրայով վերադառնա Մերձավոր-Միջին Արևելքում արդեն նշմարվող Թուրքիայի ճնշված ժողովուրդների ազատագրության խնդրի բաղկացուցիչը հանդիսացող՝ Հայկական հարցի գիրկը:

Նման պայմաններում ԱՄՆ-Ռուսաստան՝ աշխարհառազմավարական և Ռուսաստան-Եվրոպա՝ քաղաքակրթական դիսկուրսների մեջ հարմարավետ կերպով տեղավորվող քրիստոնյա Հայաստանն իր գոյատևումն ապահովելու և հայ ժողովրդի իրավունքների վերականգնման խնդրին տեր կանգնելու համար պարտավոր է առաջնորդվել Ադրբեջանի ու Թուրքիայի «վիրահատությունների» համար հող նախապատրաստող՝ մերձավորմիջինարևելյան քաղաքակրթական տարածքի ձևավորման ռազմավարությամբ:

Խմբ.

TIME TO RESTRAIN TURKEY

Edit.

ВРЕМЯ ОБУЗДАТЬ ТУРЦИЮ

Ред.

Վեմ համահայկական հանդես, ԺԼ (ԺԷ) տարի, թիվ 4 (68), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2019